ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/1465/02/25

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

20 փետրվարի 2025թ | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «ԳԼՈԲԱԼ ՓԱՐԹՆԵՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արմավիրի համայնքապետարանի՝ «ԳԼՈԲԱԼ ՓԱՐԹՆԵՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և վերջինիս հայտը մերժելուն պարտավորեցնելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«ԳԼՈԲԱԼ ՓԱՐԹՆԵՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2025թ. փետրվարի 14-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ Արմավիրի համայնքապետարանի՝ «ԳԼՈԲԱԼ ՓԱՐԹՆԵՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և վերջինիս հայտը մերժելուն պարտավորեցնելու պահանջների մասին:
Էլեկտրոնային եղանակով վարվող գործը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2025թ. փետրվարի 17-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2025թ. փետրվարի 18-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի

124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«ԳԼՈԲԱԼ ՓԱՐԹՆԵՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ Արմավիրի համայնքապետարանի՝ «ԳԼՈԲԱԼ ՓԱՐԹՆԵՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և վերջինիս հայտը մերժելուն պարտավորեցնելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Թիվ ԵԴ2/1465/02/25 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թ. մարտի 17-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by VARDANYAN GRIGORI 1507850611
Date: 2025.02.20 09:29:20 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am